CIPE

բիզնեսի բարեվարքության ակումբ

Կորպորատիվ Կառավարման Կենտրոն

20 ՏԱՐԻ

«ԻՆՉՊԵՍ ԴԱՌՆԱԼ ՀՈՒՍԱԼԻ ԳՈՐԾԸՆԿԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱՐԱՐ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ»

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՄԱՐԼԻՆ ՅԵՆՍԻՑ

Կոռուպցիան մեր ժամանակներում առաջընթացի ամենամեծ թշնամիներից է: Այն ձևավորում է հովանավորչության համակարգ, որտեղ ռեսուրսները բաշխվում են փոքրաթիվ վերնախավի կողմից, մինչդեռ մեծամասնությունը հայտնվում է աղքատության ծուղակում:

Կոռուպցիան ոչ միայն խափանում է մրցակցությունն ու նորարարությունը, այլև ավելացնում բիզնես վարելու ծախսերը և կյանքի գինը: Այն ոչ միայն խաթարում է գլոբալ տնտեսությունը, այլև խթանում է ահաբեկչությունն ամբողջ աշխարհում, հետևաբար, սպառնում երկրների ազգային անվտանգությանը:

Կոռուպցիան ամենուր է: Պետք է պայքարել դրա դեմ: Սակայն պետք է նաև գիտակցել, որ ոչ ոք կատարյալ չէ: Ուստի չպետք է հուսահատվել անհաջողություններից ու սխալներից: Կոռուպցիան կարող է ունենալ տարբեր դրսևորումներ: Դուք դրանք չեք նկատի, քանի դեռ չգիտեք դրանց մասին:

Բարեվարքությունը ճիշտ գործերը ճիշտ անելն է, նույնիսկ երբ ոչ ոք չի հսկում: Բարեվարքությունը մեր գործունեության լիցենզիան է՝ անկախ այն հանգամանքից, աշխատում ենք մենք առևտրային, թե ոչ առևտրային կազմակերպությունում:

Բոլորս ցանկանում ենք ստեղծել իրապես հիանալի ապրանքներ և ծառայություններ: Հետևաբար, մենք նաև պետք է իմանանք, թե ովքեր են մեր գործընկերները, առաջնորդվում են արդյոք նրանք էթիկական սկզբունքներով, ինչ սպասումներ ունեն նրանք, և ինչպես է նրանց գործունեությունն ազդում, մեր համբավի և մեր մատակարարման շղթայի վրա:

Աշխատակիցների և գործընկերների լավ վարքագիծը կարող են խրախուսել կամ խոչընդոտել, այսպես կոչված, «մշակութային առաջնորդները»: Այս առումով կարող ենք տարբերել կանխարգելման, բացահայտման և արձագանքման փուլերը:

Կանխարգելման փուլում աշխատակիցները կամ բիզնես գործընկերները պետք է հստակ պատկերացնեն, թե ինչ են սպասում իրենցից: Բարձրագույն ղեկավարությունը պետք է սահմանի լավ վարքագծի նորմերը, օրինակ ծառայի և ճիշտ տոն հաղորդի վերևից: Ճիշտ խոսքերից տարբերվող գործելաոճը կխարխլի ղեկավարության ուղերձն ու դիրքերը: Հետևաբար, կիրառեք միայն այն, ինչ քարոզում եք: Աջակցեք և պաշտպանեք ձեր անձնակազմին և գործընկերներին ճիշտ գործեր անելու նրանց ձգտումներում:

Սահմանեք ձեր հիմնական արժեքները, վարքագծի կանոնները և ստանձնեք բարեվարքության հստակ ու երկարաժամկետ հանձնառություն: Ապրեք ձեր արժեքներին և վարքագծի կանոններին համապատասխան: Երբ դուք սահմանում եք սպասումներ ձեր աշխատակիցներից, դուք նաև սահմանում եք սպասումներ ինքներդ ձեզնից: Լավ օրինակն իրապես խրախուսում է լավ վարքագիծը: Մինչ որոշում կայացնելը խոսեք ձեր խնդիրների և դիտարկումների մասին:

Աշխատակիցներից բացի, ձեր գործարար վարքագծով հետաքրքրված են նաև ձեր բիզնես գործընկերները: Նրանք ցանկանում են իմանալ ձեր հիմնական արժեքները, վարքագծի կանոնները և տեսնել դրանք կիրառության մեջ: Դուք կարող եք հստակեցնել, թե ինչպիսի ընկերություն եք ուզում լինել և ում հետ կցանկանայիք գործ ունենալ: Այստեղ ևս կարևոր են հաղորդակցումը և օրինակ ծառայելը:

Խնդիրները բացահայտելու համար անհրաժեշտ է լինել թափանցիկ և հիշել, որ ամենալավ աղտահանող միջոցը արևի ճառագայթներն են: Թափանցիկությունը տեսանելի կդարձնի ձեր վարքագիծը, կօգնի աշխատակիցներին ու գործընկերներին հասկանալ՝ ինչ է կատարվում իրականում, ինչ ազդեցություն կարող է ունենալ նման վարքագիծը, և ինչպես կարելի է փոխել կամ բարելավել սեփականը: Էթիկական երկընտրանքները բաց քննարկելու համար անհրաժեշտ է ձևավորել անվտանգ ու ապահով միջավայր, ինչպես նաև խուսափել «թունելի տեսլականը» զարգացնելուց կամ լռության մշակույթից: Փորձեք ձեր շուրջ համախմբել անձանց, որոնք ունեն տարբեր կարծիքներ, որպեսզի ձեզ անընդհատ մարտահրավերներ նետեն՝ ճիշտ եք անում, կարող եք ավելի լավ անել: Կայացրեք որոշումներ և կատարեք ընտրություն, խոսեք դրանց մասին, բացատրեք դրանք: Խրախուսեք հնարավոր խնդիրների մասին բարձրաձայնելը: Դա նաև պահանջում է ունենալ քննադատությունը և այլընտրանքներն ընդունելու կարողություն:

Բարեվարքությունը խրախուսելու համար անհրաժեշտ է նաև արձագանքել, հետևանքը կապել անցանկալի կամ խոչընդոտող վարքագծի հետ: Եթե այդպես չեք անում, դուք ազդակ եք տալիս, որ հանդուրժում եք ոչ էթիկական վարքագիծը, ինչն արդյունքում խարխլում է ձեր դիրքերը:

Պարգևատրեք ձեր աշխատակիցներին, եթե նրանք ցուցաբերում են էթիկական վարքագիծ, ունեն իրենց դրական ներդրումը ձեր ընկերության էթիկական չափանիշները առաջ մղելու հարցում, ինչպես նաև բարձրաձայնում և ազդադարում են խնդիրները կամ ընթացիկ անախորժությունները: Հստակեցրեք պատասխանատվության շրջանակները: Այս առումով պատասխանատվության ենթարկեք նաև ձեզ և հաղորդակցվեք այդ մասին:

Դուք կարող եք և պետք է պատասխանատվության ենթարկեք նաև ձեր բիզնես գործընկերներին, եթե նրանք ներգրավված են խարդախության մեջ կամ դրսևորում են վտանգավոր ու վնասակար վարքագիծ: Կարևոր է գործել ձեր քաղաքականություններին համապատասխան, պատշաճ շրջահայացությամբ ուսումնասիրել գործընկերներին: Վերջապես, համապատասխան վարքագծի պարտադրումը ենթադրում է բացասական հետևանքներ կամ նույնիսկ պատիժ, եթե դրանում ներգրավված անձինք միտումնավոր դրսևորել են խոչընդոտող կամ բացասական վարքագիծ և իրենց վերաբերմունքը չեն փոխել միջադեպը քննարկելուց և դրա համար պատասխանատվության ենթարկվելուց հետո: Միաժամանակ, բարեվարքությունը խթանող վարքագծի համար պարգևատրեք աշխատակիցներին և գործընկերներին: Դա շատ կարևոր է, քանի որ ձեր շահակիցներն իրենց կզգան ապահով և տեսանելի: Այլ կերպ ասած, կիրառեք «մտրակի և բլիթի» մոտեցումը:

Եվ վերջապես, բարեվարքության մշակույթը խրախուսելու համար շատ կարևոր են վերապատրաստումները: Բարեվարքությունը նման է մկանի, իսկ մկանը մշտապես մարզվելու և վարժանքի կարիք ունի:

ՀԻՇԵՔ, որ այս ամենը պաշտպանում է ձեր հեղինակությունը, և որ բարեվարքությունը ձեր գործելու թույլտվությունն է: